ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍՈՒՐԵՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Հայաստանի մտավորականությունը ծանր կորուստ ունեցավ: Մահը մեր շարքերից խլեց հանրապետության ճանաչված գիտնական և հասարակական գործիչ, գիտության կազմակերպիչ, Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Արարատ» և բնության ու հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիաների անդամ, Կոնստանտին Սուրենի Խուդավերդյանին:

Կ. Խուդավերդյանը ծնվել է 1929 թ. հունվարի 9-ին, Երևանում: 1946 թ. ավարտել է Երևանի Ջերժինսկու անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1951 թ.՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1956 թ. աշխատել է ՀԳԱ պատմության ինստիտուտում: 1959 թ. նա պաշտպանում է թեկնածուական, իսկ 1967 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1974 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1988 թ. մինչև իր կյանքի վերջը Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագիրն էր:

Մանուկ հասակից Կ. Խուդավերդյանը կիսել է իր սերնդակիցներից շատերին բաժին ընկած դառը ճակատագիրը: 1936 թ. բռնադատվում են նրա ծնողները և նա դատապարտվում է դժվարությունները միայնակ հաղթահարելու, սովորելու հետ մեկտեղ ընտանիքի կարիքները բավարարելու հոգսով:

Նվիրաբերվելով պատմագիտության զարգացմանը Կ. Խուդավերդյանը որոշակի հետք թողեց այդ բնագավառում: Նրա հետաքրքրության շրջանակները շատ լայն էին: Նա հայ ժողովրդի պատմությանը, պատմագրությանը, հայ մշակույթին ու ազգամիջյան հարաբերություններին, արցախահայության ազատագրական պայքարին, հայոց ցեղասպանությանը

նվիրված ավելի քան 120 աշխատությունների հեղինակ է, որից 20-ը մենագրություններ՝ տպագրված Երևանում, Մոսկվայում, Տալլինում և այլուր:

Կ. Խուդավերդյանի ուսումնասիրությունների զգալի մասը նվիրված է հայ մշակույթի զարգացման հարցերին: Նա հիմնավորել է հայկական մշակույթի զարգացման հիմնական փուլերը, տվել պարբերացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ազգային մշակույթի առանձնահատկություններին: Այդ ուսումնասիրություններով սկզբնավորվեցին հայ մշակույթի քննական վերլուծության հիմնական ուղղությունները, որ արժանացան պատմագիտության բարձր գնահատականին. նրա «Կուլտուրական հեղափոխության կենսագործումը Հայաստանում» մեծածավալ աշխատությունը լուրջ ներդրում է պատմագիտության մեջ:

Պրոֆ. Խուդավերդյանը ակտիվ մասնակցություն է ունեցել կոլեկտիվ, ընդհանրացնող աշխատությունների ստեղծման գործում: Նա «Հայ ժողովրդի պատմության» 7 և 8-րդ հատորների, «Հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» մեկհատորյակի, «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական դասագրքերի հիմնական հեղինակներից էր:

Կ. Խուդավերդյանը ճանաչված հեղինակություն էր շատ երկրներում, որտեղից հաճախ հրավիրվում էր դիտական քննարկումներին մասնակցելու համար: Նրա հետազոտությունների արդյունքները բազմիցս ներկայացվել են համամիութենական և միջազգային դիտաժողովներում; Իսկ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում և այլուր:

Չնայած իր ծանրաբեռնվածությանը Կ. Խուդավերդյանը ակտիվ դիտա-մանկավարժական աշխատանք էր կատարում: 1964 թ. դասախոսում էր Երևանի պետական համալսարանում: Նրա ղեկավարությամբ Հայաստանում և հանրապետությունից դուրս տասնյակ ասպիրանտներ ու հայցողներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Նա ստեղծեց յուրահատուկ դպրոց, որի բովով անցել է այսօրվա պատմաբանների զգալի մասը:

Կ. Խուդավերդյանի կյանքի անբաժան մասն էր կազմում ակտիվ հասարակական գործունեությունը: Նա շուրջ 40 տարի օգտաշատ մասնակցություն է ունեցել արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի միության աշխատանքներին, երկար տարիներ ղեկավարել է Հայաստան–Ավստրիա, հետագայում՝ Հայաստան–Շվեյցարիա ընկերությունների աշխատանքները: Բռնադատվածների իրավունքների վերականգնման համար հիմնված «Հուշամատյան» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահն էր, ակտիվ մասնակցում էր հասարակական հնչեղություն ունեցող միջոցառումներին:

Արգասաբեր եղան Կ. Խուդավերդյանի, որպես Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագիր աշխատած տարիները: Նրա կազմակերպական

տաղանդի շնորհիվ, չնայած ծանր պայմաններին, շարունակվեց Հանրագիտարանի հերթական հատորների լույս ընծայումը: Նա նախաձեռնեց «Ոսկեփոքրիկ» մանկական հանրագիտարանի և հատկապես թեմատիկ հանրագիտարանների պատրաստումը: Արժեքավոր է հայերեն և ռուսերեն լույս տեսած «Հայկական հարցը» հանրագիտարանը, որի բազմաթիվ հոդվածների հեղինակն էր նա: Կ. Խուդավերդյանի գլխավորությամբ պատրաստվում էին նաև «Հայ սփյուռք» և «Քրիստոնյա Հայաստան» ինքնատիպ և արժեքավոր հանրագիտարանները: Դրանցից առաջինը ամփոփում է տեղեկություններ շուրջ 70 երկրների մասին, երկրորդը՝ լուսաբանում հայ Առաքելական եկեղեցու դերը մեր ժողովրդի կյանքում: Այն նվիրված է հայոց դարձի 1700-ամյակին:

Կ. Խուդավերդյանը զգոն և հոգատար ընկեր էր: Որտեղ էլ աշխատեր՝ ՀԳԱ նախագահությունում, Պատմության ինստիտուտում թե Հայկական Հանրագիտարանում, կարողանում էր իր շուրջը համախմբել բանիմաց, գործին նվիրված մասնագետների և կազմակերպել աշխատանքները: Նա ընտանիքի լավ հայր էր:

Պրոֆ. Կ. Խուդավերդյանի կյանքը հայրենիքին ու ժողովրդին ծառայելու մի վառ օրինակ էր: Դա նվիրաբերում ու պայքար էր, որի շնորհիվ «ժողովրդի թշնամու» զավակը կարողացավ միայնակ, սեփական ուժերին ապավինած, իր համար ուղի հարթել, հասնել բարձր նվաճումների և իր հետևից տասնյակ մարդկանց տանել, դառնալ նրանց ղեկավարն ու հովանավորը: Եվ այդ բոլորից հետո լինել բարի ու ներող, որպիսին նա մնաց իր ընկերների ու ճանաչողների հուշերում...

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ